ՌԻԽԱՐԴ ՎԱԳՆԵՐ ԵՎ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Երկու դար է մեզ բաժանում երաժշտական մշակույթի մեծագույն երևույթ՝ «մարդ-առասպել» Ռիխարդ Վագներից (1813–1883): Գեղարվեստագետ, ով իր բարդ ժամանակաշրջանի տառապանքների և հզոր առկայծումների խորհրդանիշն էր, իսկ նրա արվեստը այդ պատմական դարի պեսիմիզմի ու հեղափոխականության արտացոլանքը: Այսօր դժվար է պատկերացնել XIX դարի երաժշտության պատմության ընթացքը և XX դարաշրջանի երաժշտարվեստի զարգացման ուղիներն առանց վագներյան դրամաների: Ռ. Վագները երաժշտության ասպարեզ մտավ և ասես ճեղքեց երաժշտական մտածողության կարծրատիպերը, օպերային արվեստի գեղագիտական սկզբունքները, ազգայինի վերաբերյալ բոլոր պատկերացումները: Գերմանացի կոմպոզիտորը երաժշտության պատմության ամենահակասական ու հետաքրքիր կերպարներից էր, որի շուրջ մշտապես հավաքվելու էին կա՛մ մոլեռանդ երկրպագուներ, կա՛մ մոլեռանդ հակառակորդներ: Բազմակողմանի հանճար էր Վագները՝ կոմպոզիտոր, օպերային բարենորոգիչ, երաժշտական տեսաբան և քննադատ, խոշոր նորարար հարմոնիայի ու գործիքագիտության բնագավառներում: Կոմպոզիտորի ներդրումը հսկայական է ժամանակակից դիրիժորական արվեստի ձևավորման մեջ: Վագները խոշոր դրամատուրգ էր, նրա օպերային լիբրետոները, որոնք հեղինակում էր գեղարվեստական բարձր ճաշակով, փիլիսոփայության ոլորտին վերաբերող լուրջ գաղափարական երկեր էին: Այդ երկերն իր իսկ, Վագների երաժշտությամբ, նոր շունչ ու կյանք էին ստանում: Ռ. Վագների օպերա-դրամաները խոսքի և երաժշտության, մտքի ու զգացմունքի կատարյալ միասնություն են և հիշեցնում են անտիկ ողբերգության հավերժական գաղափարները:

Վագների արվեստի ակունքները խորապես ազգային են, միևնույն ժամանակ, մեծ գերմանացին անուրանալի ավանդ ունեցավ համաշխարհային երաժշտարվեստի համակարգում՝ անմահացնելով սեփական անունը, ժողովրդին, հայրենիքն ու ապրած ժամանակաշրջանը:

Սաքսոնիայի ամենամեծ քաղաքում՝ Լայպցիգում, 1813 թ. մայիսի 22-ին Ֆրիդրիխ Վագների և Յոհանն-Ռոզինա Բեետցի ընտանիքում ծնվեց արու զավակ՝ Վիլհելմ-Ռիխարդ Վագները: Նախախնամությամբ, թե պատահականությամբ փոքրիկը կնքվեց Լայպցիգի գոթական սուրբ Թոմա եկեղեցում: Այդ եկեղեցին իր խորհուրդն ուներ. 1212 թվականից Թոմասկիրխեում արդեն գոյություն է ունեցել արական երգչախումբ, որն աչքի էր ընկնում իր բարձր վարպետությամբ: Այդ եկեղեցում են աշխատել և ստեղծագործել գերմանացի կոմպոզիտորներ Ի. Կունաուն, Գ. Թելեմանը, երկար տարիներ (1723–1750 թթ.) սուրբ Թոմա եկեղեցու կանտորն էր մե-

ծագույնը բոլոր երաժիշտներից՝ Յո. Ս. Բախը: Մշակութային կենտրոն Լայպցիգին, որը հայտնի է բազմաթիվ թատրոններով ու գեղատեսիլ հրապարակներով, հռչակ է բերել նաև 1409 թ. հիմնված Եվրոպայի հնագույն համալսարաններից մեկը: Լայպցիգի համալսարանում են ուսանել Գ. Լայբնիցը, Գ. Լեսինգը, Ի. Գյոթեն, Ֆ. Նիցշեն, հանճարների ցուցակը համալրում է Ռ. Վագները: Հայերից այդ խոշորագույն համալսարանում են սովորել Ավ. Իսահակյանը, Մ. Աբեղյանը, Կ. Աբովյանը, Գ. Էդիլյանը, Ս. Կասյանը և ուրիշներ:

Ռ. Վագների կյանքը, որը կամփոփվի իր արվեստում, տարերային էր, հագեցած իր բուռն ժամանակաշրջանին բնորոշ հակասություններով, հեղափոխական իրադարձություններով: XIX դարում Անհատ-արվեստագետը մշտապես բախվում էր սառն ու դատարկ իրականությանը, ամբոխի քննադատությանը: Բայց Վագների կամային հզոր հատկանիշներն ու հավատը սեփական սկզբունքների ճշմարտացիության մեջ օգնեցին չընկրկել դժվարությունների առջև: Անտեսելով երաժշտության մեջ սահմանված սահմանափակ դոգմաները՝ կոմպոզիտորը կարողացավ հաստատել իր նորարարական գաղափարները՝ դրանք կյանքի կոչելով իր երազած և ավելի ուշ Բայրոյթում կառուցած սեփական օպերային թատրոնում: Վագների ժամանակակիցներից շատերը ըմբռնեցին և ըստ արժանվույն գնահատեցին կոմպոզիտորի երաժշտական թատրոնում կատարած բարեփոխումները: Ավելին, Վագների շուրջ համախմբվեց երկրպագուների հսկայական բանակ, ովքեր հիանում, անգամ «հիվանդանում» էին (օրինակ՝ Ֆ. Նիցշեն) գերմանացու արվեստով: Ռ. Վագների գիտական կենսագրությունը մշտապես հետաքրքրել է իր ժամանակակիցներին և հետագա սերունդներին: Նրանով հիացել և նրա ստեղծագործությանն են անդրադարձել Հ. Բեռլիոզը, Պ. Չայկովսկին, Ֆ. Լիստը, XIX–XX դարասկզբի մեծագույն մտավորականներ, փիլիսոփաներ ու գրողներ՝ Թ. Մանը, Լ. Տոլստոյը, Բ. Շոուն, Ֆ. Նիցշեն, Շ. Բոդլերն ու Ռ. Ռոլանը:

Բացի տասներեք օպերաներից՝ «Փերիներ», «Սիրո արգելք», «Ռիենցի», «Թռչող հոլանդացին», «Տանհոյզեր», «Լոենգրին», «Հռենոսի ոսկին», «Վալկիրիա», «Տրիստան և Իզոլդ», «Նյունբերգյան մայստերզինգերներ», «Զիգֆրիդ», «Աստվածների մայրամուտը», «Պարսիֆալ», ավելի ստույգ երաժշտական դրամաներից, որոնց լիբրետոները, ինչպես նշեցինք, որպես խորը փիլիսոփայական պատումներ մշակվում էին Ռ. Վագների կողմից, կոմպոզիտորը շուրջ 16 հատոր երաժշտաքննադատական և տեսական աշխատությունների հեղինակ է: Հիշատակենք դրանցից մի քանիսը. «Օպերա և դրամա», «Ապագայի գեղարվեստական ստեղծագործություն», «Ուղերձ բարեկամներիս», «Դիրիժորության մասին», «Ուխտագնացություն Բեթհովենի մոտ», «Գերմանական երաժշտության էությունը», «Իմ կյանքը» և այլն: Մատենագրական նշանակություն են ձեռք բերել Ռ. Վագների հուշերն ու նամակները: Կոմպոզիտորի անձն ու գործը, հնարավոր ամբողջությամբ, լուսաբանված և հրատարակված է գիտական, գեղարվեստական ու քննադատական բնույթի պատկառազդու գրականության միջոցով:

Ոչ միայն կոմպոզիտորի կյանքի օրոք, այլև նրա վախճանից տևական ժամանակ հետո նորովի բացահայտվում և արժևորվում էր Մեծ ստեղծագործողի կատարած գործի ու երաժշտական ժառանգության իրական նշանակությունը: Երաժշտական դրամայի մեջ Վագների նախանշած ուղիները տանում էին դեպի XX դ. երաժշտական նոր ուղղությունների ձևավորում: Ինչպես կոմպոզիտորն էր կանխորոշել, «իր ապագայի երաժշտությունը»[1] առ այսօր արվեստի մեջ նորովի մտածելու լայն հորիզոններ է բացում, իսկ վագներյան համամարդկային գաղափարները ժամանակի մեջ ձեռք են բերում ծրագրային նշանակություն: Այդ իսկ պատճառով՝ Ռ. Վագների երաժշտական նորամուծությունները ստեղծագործական ոգեշնչման աղբյուր են հանդիսացել իրարից շատ տարբեր և հեռու գտնվող երաժիշտ-մտածողների համար: XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային երաժշտական դպրոցների բազմաթիվ ներկայացուցիչներ այս կամ այն չափով իրենց արվեստում կրել են Ռ. Վագների նորարարական գաղափարների ազդեցությունը: Խոսք կարող է լինել և՛ ռուսական ազդեցիկ դպրոցի, և՛ ուշ ռոմանտիզմի դարաշրջանի ավստրո-գերմանական դպրոցների մասին և այլն: Բայց մեր խնդրո առարկան Գերմանիայից աշխարհագրորեն և պատմականորեն բավական հեռու գտնվող Հայաստանի ու հայ ազգային երաժշտության հիմնադրի մասին է:

Հայ իրականության մեջ Ռ. Վագներին առաջինն անդրադարձել է ազգային երաժշտական մշակույթի դասական, մեր ժողովրդի համար սրբացված մեծություն Կոմիտաս Վարդապետը՝ Հայաստանի, հայ երաժշտության մեծագույն ներկայացուցիչը: Ինչո՞ւ և ինչպե՞ս է Կոմիտասն անդրադարձել գերմանացի կոմպոզիտորին:

Կոմիտաս Վարդապետը, ինչպես Վագները, ունիվերսալ հանճար էր. կոմպոզիտոր, երաժշտագետ, ազգագրագետ, խմբավար, երգիչ ու մանկավարժ, հայ երաժշտագիտության, միջնադարագիտության, ֆոլկլորագիտության հիմնադիր: Նա ոչ միայն հայ, այլև արևելյան ու եվրոպական երաժշտության մեծագույն գիտակներից էր: 1896–1899 թթ. Կոմիտաս Վարդապետն իր ուսումնառությունը ստացել է Գերմանիայում՝ Բեռլինում, Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանի փիլիսոփայության բաժնում: Կոմիտասը կրթվել է հեղինակավոր գերմանացի մանկավարժներ Օ. Ֆլայշերի, Մ. Ֆրիդլանդերի, Հ. Բելերմանի, Մ. Զայֆերտի մոտ: Անուրանալի է գերմանական մշակույթի դերը նրա ստեղծագործական անհատականության ձևավորման վրա: Գերմանական ռոմանտիկական երաժշտության (Մենդելսոն, Շուման) ազդեցությունը նկատելի է, մասնավորապես, Կոմիտասի վաղ շրջանի ստեղծագործություններում («Առ գետս Բաբելացվոց» սաղմոսը, երգեր և ռոմանսներ Գյոթեի, Լենաուի խոսքերով):

Կոմիտաս Վարդապետը բեռլինյան ուսումնառության շրջանում կուտակում էր հիմնավոր երաժշտատեսական գիտելիքներ: Իր գիտական, պրպտուն մտքով նա հետաքրքրվում էր երաժշտությանը վերաբերող բոլոր հիմնախնդիրներով: Ուսանող Կոմիտասը ձեռք էր բերում արժեքավոր

[1] Р. В а г н е р. Опера и драма. М., 1906, с. 3.

կլավիրներ և պարտիտուտներ, հաճախում համերգների: Նա «Երաժշտական միջազգային ընկերության» Բեռլինի մասնաճյուղի գործուն անդամներից էր: Այդ հեղինակավոր լսարանում հանդես էր գալիս համերգ-դասախոսություններով, միևնույն ժամանակ ուսումնասիրում էր եվրոպական, մասնավորապես, գերմանական երաժշտության հին վարպետների թողած ժառանգությունը: Անտարակույս, Ռ. Վագների հայրենիքում երիտասարդ երաժիշտը պիտի հետաքրքրվեր և ոգեշնչվեր Մեծ գերմանացու երաժշտական ու գիտական ժառանգությամբ: 1897 թ. Բեռլինում, Մենդելսոնի «Դուետների» և Բեթհովենի «Մեսսա Սոլեմնիս»-ի հետ, Կոմիտասը ձեռք է բերում Վագների «Լոենգրին» օպերայի կլավիրը: Դրան հաջորդում է «Տանհոյզեր» օպերայի կլավիրը, որը Վարդապետի կողմից ենթարկվում է մանրազնին երաժշտատեսական վերլուծության: Ի դեպ, այդ շրջանում վագներյան ստեղծագործությունները համարվում էին գերժամանակակից, «Նոր գերմանական երաժշտություն»[2] և շատերի համար անըմբռնելի էին կոմպոզիտորի նորարարական մղումները:

Բեռլինում կրթվելու շրջանում Կոմիտասն աշխատում էր ներկա գտնվել Վագների երաժշտական դրամաների ներկայացումներին: Ինչպես հիշում էր Կոմիտասի բարեկամ, կարկառուն հայագետ Մանուկ Աբեղյանը, «Երիտասարդ Կոմիտասը երգել է Վագների օպերային ներկայացումներում՝ նպատակ ունենալով ավելի մոտիկից ծանոթանալու օպերային արվեստի առանձնահատկություններին»[3]:

Գերմաներենի իմացությունն օգնում էր երիտասարդ հայ երաժշտին խորամուխ լինելու Վագների գրելաոճի, խոսքի շեշտադրությամբ ձևավորված երաժշտական-ինտոնացիոն առանձնահատկությունների մեջ: Կոմիտաս Վարդապետին գրավում էր վագներյան նվագախմբի ճոխ և հարուստ հնչողությունը: Օպերային նորարար լինելուց բացի՝ Կոմիտասը, ճշմարտացիորեն, Վագներին համարում էր խոշոր սիմֆոնիստ, ծրագրային սիմֆոնիզմի ջատագով:

Վարդապետը շատ բարձր էր գնահատում «Նյուրնբերգյան մայստերզինգերներ»-ը՝ որպես ազգային արժեքներն ու ժողովրդական իմաստնությունը գովերգող ստեղծագործություն: «Նիբելունգի մատանի» քառապատումը, որի գրական հիմնանյութը «Ավագ Էդդայի երգն» ու «Վոլսունգների մասին սագան»է, Կոմիտասը համարում էր բոլոր ժամանակների ամենամեծակերտ (մոնումենտալ) դրաման: Այդ քառապատման օրինակով՝ Վարդապետը մտահղացում ուներ գրելու «Սասնա ծռեր» օպերան, որի հիմքում տեսնում էր հայոց էպոսը[4]:

Մեր կարծիքով, Կոմիտասի՝ Վագներին անդրադառնալու ամենակարևոր շարժառիթը վերջինիս ազգայինի վրա խարսխված մտածողությունն էր, որն այնքան հոգեհարազատ էր իրեն:

Ռ. Վագները խորապես ազգային արվեստագետ է: Նրա արվեստի ակունքները բխում են ժողովրդական երաժշտության մաքուր ու հավերժական սկզբնաղբյուրներից: Ըստ Վագների՝ Գերմանիայի յուրաքանչյուր

---

[2] *Տե՛ս* М. Д р у с к и н. История зарубежной музыки. М., 1976, с. 9.

[3] *Տե՛ս Ի. Յ ո ղ լ յ ա ն. Կոմիտաս, Երևան, 1969, էջ 23:*

[4] *Տե՛ս Կոմիտասական, հ. 2, Երևան, 1981, էջ 243:*

գավառ ունի իր ստեղծագործողը, որն ինքնուրույն ծառայում է «թանկագին» արվեստին: «Գերմանացին վերաբերվում է երաժշտությանը որպես սրբություն»[5],– գրում է կոմպոզիտորը:

Որպես ազգային դպրոցի հիմնադիր ներկայացուցիչ, ժողովրդական գեղջուկ երաժշտության վրա խարսխված կոմպոզիտոր՝ Կոմիտաս Վարդապետն իր երաժշտագիտական ժառանգության մեջ չէր կարող չանդրադառնալ Վագներին: Կոմիտասն արևմտաեվրոպական կոմպոզիտորներից անդրադարձել է նաև Ֆերենց Լիստին[6] և Ջուզեպե Վերդիին[7]: Ընտրությունը պատահական չէր. Ռ. Վագները, Ֆ. Լիստը և Ջ. Վերդին դարակազմիկ նշանակության երաժիշտներ էին: XIX դարի մեծագույն ստեղծագործողներից, նորարար-ռեֆորմատորներ, որոնք ռոմանտիկական երաժշտության զարգացումը հասցրին ավելի բարձր մակարդակի: Ազգային երաժշտական դպրոցների խոշոր ներկայացուցիչներ, որոնցից յուրաքանչյուրն առանձնակի վարպետությամբ զուգորդեց ազգային երաժշտության առանձնահատկությունները՝ համաշխարհային երաժշտամշակույթի լավագույն ավանդույթներին: Այս կոմպոզիտորներին նվիրված Կոմիտաս Վարդապետի հոդվածները զետեղված են Թիֆլիսի «Տարազ» հանդեսի 1904 թ. համարներում[8]:

Կոմիտաս Վարդապետը որպես գիտնական, երաժիշտ-հետազոտող ունի գրելառճի իր առանձնահատկություններն ու յուրօրինակությունը: «Ռիխարդ Վագներ» վերնագրով ակնարկում Կոմիտասի շարադրանքն աչքի է ընկնում կոնկրետությամբ, հակիրճ, բայց դիպուկ բնորոշումներով: Դժվար է պատկերացնել, որ Վագների պես մեծության գիտական կենսագրությունն ամփոփ հնարավոր է ներկայացնել մի քանի էջի սահմաններում: Կոմիտաս Վարդապետը հնարավոր մանրամասներով նշում է Վագների կյանքի դրվագները՝ չանտեսելով ոչ մի իրադարձություն: Հստակ պատկերացնելու համար «Բայրոյթյան վարպետ»-ի մասին Կոմիտասի շարադրանքը անդրադառնանք հոդվածին:

Մանրամասն ներկայացնելով կենսագրական փաստերը (ծնունդը Լայպցիգում, ընտանիքի կյանքը Դրեզդենում, ուսումը գիմնազիայում և համալսարանում)՝ Կոմիտասը կանգ է առնում երիտասարդ կոմպոզիտորի բազմատեսակ ընդունակությունների և հետաքրքրությունների վրա. հրապուրանքը Շեքսպիրի ողբերգություններով, Ֆոյերբախի և Շոպենհաուերի փիլիսոփայությամբ, ինչպես նաև գեղանկարչությամբ: Հոդվածագիրը չի անտեսում Վագների դիրիժորական ու քննադատական-հրապարակախոսական գործունեությունը: Եվ, որ ամենակարևորն է, Վագների կյանքի շրջափուլերը Կոմիտասը դիտարկում է նրա ստեղծագործությունների մի-

---

[5] *Մեջբերում՝ Ռ. Վագների «Գերմանական երաժշտության էությունը» հոդվածից (տե՛ս* www.google.com «Литература о Вагнере*):*

[6] *Տե՛ս* L. Sahakyan. Ferenc List's Appraisal by Komitas Vardapet.– "Anuario Musical", № 67, 2012, pp. 215–222.

[7] *«Տարազ» (Թիֆլիս), 1904, -23, էջ 208–209: Ի դեպ, հայ երաժշտագիտության մեջ Ջ. Վերդիի մասին ակնարկով առաջինը հանդես է եկել երաժշտագետ, Թիֆլիսում* «Кавказский вестник» *գիտագրական ամսագրի հիմնադիր (1900 թ.) Բարսեղ Ղորշանյանը (1865–1934):*

[8] *«Տարազ», 1904, -8, էջ 57–58, -19, էջ 173–174:*

ջոցով: Կենսագրական շրջադարձային դիպվածները (կյանքը Փարիզում, արտաքսումը Գերմանիայից, տարիները Ցյուրիխում) անդրադառնում էին կոմպոզիտորի ստեղծագործական բեղունության, օպերաների բովանդակության և ինքնատիպության վրա: Եթե Փարիզում ապրած տարիները Կոմիտասը բնորոշում է որպես «դաժան ու անպատիվ կյանքի» տարիներ, այդ շրջանի ստեղծագործական ձեռքբերումները ևս համարում է «նվաստացուցիչ զբաղմունք»[9]: Վագների մուտքը լուրջ երաժշտության աշխարհ Կոմիտասը տեսնում է նրա 1840-ական թվականների օպերաներից սկսած, որոնց մեջ Վագները կարևորում էր «բանաստեղծությունը», այսինքն՝ տեքստը և դրա երաժշտական մարմնավորումը: Պատահական չէ, որ Կոմիտասը օգտագործում է «բանաստեղծություն»-ը լիբրետոյի փոխարեն՝ հստակ տարանջատելով դրանք: Բանաստեղծությունը գեղարվեստական երկ է: Վագների դրամաների գրական հիմքը օժտված է գեղարվեստական արժեքով: Դրանցում քննվում են համամարդկային, հաճախ նաև հակասական գաղափարներ՝ ազահություն կամ բարձր բարոյականություն: Կոմիտասը մեկ բառի մեջ ամփոփում է և՛ վագներյան գրական երկերի բոլոր արժանիքները, և՛ իրեն Վագներին, որը ոչ միայն երաժիշտ-ստեղծագործող էր, այլև բանաստեղծ-ստեղծագործող: Ի դեպ, իր հանճարեղ գործերը՝ «Տանհոյզերը», «Լոհենգրինը», «Մայստերզինգերներն» ու «Նիբելունգները» սկզբում ծնվել են իբրև գրական մտահղացումներ, այնուհետև դրվել երաժշտության վրա, ինչպես Կոմիտասն է բնորոշում. «Վագները եղանակը վեր է ածում ասերգի (Recitativ) բարձր աստիճանի, իսկ երաժշտական գաղափարները տալիս է նվագարաններին (այսինքն՝ նվագախմբին – Լ. Ս.)»: Այստեղ Կոմիտասը շարադրում է Վագների ռեֆորմի կարևոր սկզբունքները, խոսքի իմաստային նշանակությունը, երբ երաժշտությունը բխում է խոսքի շեշտադրությունից և իմաստից, նվագախմբի հսկայական դերը, որպես դրամայի գաղափարի կրող: Վագների ստեղծագործության երրորդ շրջանը (առավել հասուն և կատարյալ շրջանը) Կոմիտասը կապում է «Տրիստան և Իզոլդ» օպերայի հետ: Իրավամբ, այս օպերայում դրաման հասնում է ծայրահեղ հոգեբանականացման, խոսք-երաժշտության կատարյալ միասնության այնպիսի զուգորդման, որ հնարավոր չէ պատկերացնել երաժշտությունն առանց խոսքի և հակառակը:

Ստեղծագործական ծաղկուն շրջանները, ինչպես նշեցինք, Վարդապետը կապում է Վագների կենսագրության լուսավոր տարիների հետ: Կոմիտասը չի անտեսում նրա շուրջ հավաքված կողմնակիցներին և քննադատներին, վերջիններիս դեմ կոմպոզիտորը պայքարում էր իր հաստատուն ու աննկուն կամային հատկանիշներով: Իսկ Վագների կենսագրական և ստեղծագործական ամենալուսավոր շրջանը, անշուշտ, կապված էր Բավարիայի թագավոր Լյուդվիգ II Մեծի հովանավորչության հետ, որի արդյունքում կոմպոզիտորին հնարավորություն ընձեռվեց ապրել, ստեղծագործել հայրենիքում: Ավելին, ինչպես գրում է Վարդապետը, թագավորի

[9] *Կոմիտաս Վարդապետ. Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Ա, Երևան, 2005, էջ 306:*

աջակցությամբ Վագներն իր «հանդիսարանը»[10], այսինքն՝ թատրոնը, հիմնեց Բայրոյթում և լուսամիտ գեղարվեստագետների դատին հանձնեց «Նիբելունգի մատանի» ամենամոնումենտալ քառերգության «նվագահանդեսը»: Իր տեսակի և ձևի մեջ օպերան բացառիկ ստեղծագործություն է. մոնումենտալ, հզոր, խորը փիլիսոփայական վիպերգություն: «Նիբելունգի մատանի» հագեցած է երաժտաբեմական հարուստ տեսարաններով, սիմֆոնիզացված նվագախմբով, բարդ լայտթեմատիկ համակարգով: Այսօր էլ մեզ հուզում են դրամայի արդիական ու մշտապես մարդկությանը հուզող գաղափարները: Կոմիտասը Վագների թատրոնը կոչում է «հանդիսարան», իսկ բեմադրությունը՝ «նվագահանդես»: Այս բնորոշումներով Վարդապետը բացահայտում է վագներյան դրամայի միտքն ու էությունը:

Ռ. Վագների բայրոյթյան թատրոնը, որպես ճարտարապետական կառույց, իր ներքին հարդարանքով տարբերվում էր ժամանակին հայտնի օպերային թատրոններից: Այն ավելի շատ հիշեցնում էր հունական ամֆիթատրոն, որի էությունը փառահեղ ողբերգություններ ցուցադրելն էր: Վագներյան թատրոնն իր կառույցով, ներքին բովանդակությամբ, ցուցադրված դրամաների հարատև գաղափարներով շքեղ ծես էր, վայր, ուր միաձուլվում են խոսքը, երաժշտությունը, բեմական խաղն ու մարդկային խորը ապրումները: Այս շքեղ ծեսի անբաժանելի մասն է կազմում վագներյան հզոր նվագախումբը, որն առավել արտահայտիչ ու ազդեցիկ է դարձնում ողջ դրաման: Կոմիտասը դիպուկ նկատում է, որ Վագների երաժշտությունը կարող է կախարդել, նրա յուրաքանչյուր հասուն ստեղծագործության հետ ասես երևան էր գալի մի «Նոր Վագներ, գերմանացի Վագներ, որ գերման ազգային երաժշտության հոյակապ շենքը բարձրացրեց»: Իր հիմնած հզոր կառույցում՝ Բայրոյթի օպերային թատրոնում, Վագները կներկայացնի ծիսական և խորհրդավոր «Պարսիֆալ» երաժշտական դրաման: Այս ստեղծագործություն-իրադարձությունն անգամ Վագների հակառակորդներին ստիպեց խոնարհվել նրա հանճարի առջև:

Հերթականությամբ, ի դեպ, բնագրի լեզվով (գերմաներեն), նշելով օպերաների անվանումներն ու առաջնախաղերը (պրեմիերաները)՝ Կոմիտաս Վարդապետը հոդվածի վերջին՝ամփոփիչ հատվածում, հնարավոր ամբողջությամբ, ճշգրտորեն, ներկայացնում է Վագներ-գեղարվեստագետի ստեղծագործական դիմանկարը.«Վագները 19-րդ դարում ամենաբարձր դրամատիկ երաժիշտն է: Վագները բոլոր դարերի ամենաամփոփ ու կենտրոնացած մտածող երաժիշտներից է...»[11]: Բաց չթողնելով վագներյան հանճարի ոչ մի հատկանիշ՝ Կոմիտաս Վարդապետն իր չափազանց ինքնատիպ ու հարուստ հայերենով բնութագրում է նաև Մեծ գերմանացու ստեղծագործությունների առանձնահատկությունները.«Վագներ նարավայն, ինչ կամենում էր. չի կարելի նրա երկերից երաժշտությունը պոկել ու այնպես նվագել, որովհետև բանաստեղծությունից ու պատկերից անբաժան է. նրա

---

[10] *Հայերեն □հանդես□ բառարմատով □հանդիսարանը□ նշանակում է շքեղ ծես, արարողություն և շուք, փառահեղություն, ցուցադրելու տեղ, ելույթի, երգ ու պարով ուրախանալու վայր (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 291):*

[11] *Տե՛ս Կոմիտաս Վարդապետ. նշվ. աշխ., էջ 311:*

երկի մեջ միասին և համերաշխ են գործում սիրտ, միտք, աչք, որոնք անբաժան միություն են ներկայացնում»[12]:

Վագների ստեղծագործական ժառանգությունն ուսումնասիրող յուրաքանչյուր երաժշտագետ, անպայմանորեն նշում է կոմպոզիտորի օպերային ռեֆորմի կարևորագույն ակզբունքը՝ խոսքի և երաժշտության կատարյալ սինթեզը: Ռ. Վագները մշակեց երաժշտական դրամայի այն ձևը, երբ խոսքից ծնվում էր երաժշտությունը և հակառակը: Այդ բաղադրիչների միասնությունից էր հյուսվում կոմպոզիտորի օպերա-դրամաների ողջ ատաղձը. «սիրտը»՝ զգացմունք-երաժշտությունը, «միտքը»՝ խոսք-գաղափարը և «աչքը»՝ ներկայացում-դրաման:

Ռիխարդ Վագներին նվիրված իր բովանդակալից հոդվածը Կոմիտաս Վարդապետն ավարտում է մարգարեական հետևյալ կանխատեսումով. «Վագները Գերմանիային ազգային երաժշտություն տվեց, իսկ օտարներին՝ դաս»[13]:

Այս տարի լրանում է հանճարեղ գերմանացու ծննդյան 200-ամյակը: Վագներին նվիրված Կոմիտաս Վարդապետի ակնարկին անդրադառնալը՝ հիշեցումն է այն իրողության, որ ժամանակի մեջ «տառապյալ ու հզոր»[14] արվեստագետն իր հավերժական երաժշտության գեղեցկությամբ մշտապես մնալու է մարդկային քաղաքակրթության բարձունքներում:

РИХАРД ВАГНЕР И КОМИТАС ВАРДАПЕТ

ЛУСИНЕ СААКЯН

Р е з ю м е

Известно, что творческая биография великого немецкого композитора Рихарда Вагнера (1813–1883) интересовала как его современников, так и представителей последующих поколений: композиторов – Г. Берлиоза, П. Чайковского, Ф. Листа; философов и писателей – Т. Манна, Ш. Бодлера, Ф. Ницше и других. В армянской действительности впервые к творчеству Р. Вагнера обратился классик армянской национальной музыки Комитас Вардапет. Комитас, как и Вагнер, был универсальным гением – композитор, музыковед, фольклорист, певец, поэт, педагог. Он получил образование в Германии в Берлинской частной консерватории Р. Шмидта и в университете Ф. Вильгельма, изучая философию. Комитас был знаком с творчеством Вагнера, а знание немецкого позволило ему глубже вникнуть в интонационно-речевые особенности музыкального языка композитора. Мышление, основанное на национальных истоках, сближало Комитаса и Вагнера. Статья Вардапета «Рихард Вагнер» затрагивает факты из жизни «Байрерского мастера», а также особенности музыкального языка великого немца.

---

[12] *Նույն տեղում, էջ 312:*

[13] *Նույն տեղում:*

[14] *1933 թ. փետրվարի 10-ին Մյունխենի համալսարանում Վագների մահվան 50-րդ տարելիցին նվիրված ելույթում Թոմաս Մանի տված բնորոշումն է (տե՛ս* www.google.comЛитература о Вагнере):

RIKHARD WAGNER AND KOMITAS VARDAPET

LUSINE SAHAKYAN

S u m m a r y

It is known that great German composer Rikhard Wagner's (1813–1883) creative biography interested both his contemporaries and the representatives of the next generations: composers – G. Berlioz, P. Tchaikovsky, F. Liszt, philosophers and writers – Th. Mann, Ch. Baudelaire, F. Nietzsche and others. For the first time in the Armenian reality the classic of Armenian national music Komitas Vardapet turned to the creativity of R. Wagner. Like Wagner, Komitas also was a universal genius – a composer, musicologist, folklorist, singer, poet and teacher. He was educated in Germany at the Berlin R. Schmidt's private Conservatory, and, studying philosophy at the F. Wilhelm's University, Komitas was familiar with the creative work of Wagner, and knowledge of German enabled him to delve deeper into the intonation-speech features of the musical language of the composer. Basic thoughts on national origins brought Komitas and Wagner close. Vardapet's article "Rikhard Wagner" affected on the facts of "The Bayreuth Master's" life and also featured the musical language of the great German.